ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող Գավառ քաղաք գյուղ Սարուխան Հ. Աբրահամյան փողոց 24/2 հասցեում գտնվող, 05-078-0037-0023 կադաստրային ծածկագրով 0.0064 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ 5 տարի օգտագործման ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրելու համար Գավառի համայնքապետարանը հայտարարում է՝ բաց մրցույթ, որը կկայանա 2024 թվականի օգոստոսի 16-ին Գավառի համայնքապետարանի նիստերի դահլիճում /Գր.Լուսավորիչի 12/, ժամը 12.00-ին:

Հողամասի տարեկան վճարի մեկնարկային չափը սահմանված է 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ: Հողամասի տարածքում առկա է ենթակառուցվածք:

Մրցույթին մասնակցության ձևակերպումն իրականացվում է հետևյալ փաստաթղթերի ներկայացմամբ.

- մասնակցության հայտ,
- մասնակցի անձնագրի և սոց քարտի լուսապատճենները,
- մասնակցության վճարի անդորագրի կրկնօրինակը /մեկնարկային գնի 1 տոկոսը, բայց ոչ պակաս 2000 ՀՀ դրամ/: Վճարումը պետք է կատարվի Գավառի համայնքապետարանի 900175101204 հաշվեհամարին:

Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է մրցույթի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ:

Մրցույթի նախավճարը /մեկնարկային վճարի 5 տոկոսի չափով/ վճարվում է մրցութի անցկացման օրը՝ մինչև մրցույթը, Գավառի համայնքապետարանի 900175101345 հաշվեհամարին, եթե մասնակիցը մրցույթում չի հաղթել, ապա նախավճարի գումարը վերադարձվումէ նրան:

Մրցույթում հաղթող է ճանաչվում լավագույն պայմաններ առաջարկած և կշռային գործակիցներով բարձր միավորներ հավաքած մասնակիցը: Մրցույթում հաղթած անձը և հանձնաժողովը՝ի դեմս նախագահի, մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո ստորագրում են մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը: Մրցույթում հաղթած անձը արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու դեպքում կորցնում է մուծած նախավճարը և զրկվում էմրցույթը չկայանալու պարագայում հողամասն առաց մրցույթի կառուցապատման իրավունքից

Հողամասը սահմանափակումներ /սերվիտուտներ/ չունի: Այն ուսումնասիրելու, մրցույթի կանոնակարգին, մրցույթի պայմաններին ու պահանջներին ծանոթանալու համար կարող են դիմել ցանկացած օր,ժամը 9.00-ից մինչև 18.00-ն:

ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ